ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 128-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 127-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 25-ի՝ «Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչներ Սիրուշ Հայրիկի Մուրադյանին և Մանվել Ալբերտի Մուրադյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողը համայնքի տվյալ հասցեում գրանցելու մասին» թիվ 127-Ա որոշման հիմնական մասում «փողոց 3, թիվ 3» բառերը փոխարինել «փողոց 3, թիվ 3/1» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. հունիսի 29
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 129

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, 68-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 45 որոշումը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատարի 22.06.2021 թվականի թիվ 7 և թիվ 8 դրական եզրակացությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի օգոստոսի 3-ին, ժամը 11:00-ին, Գլաձորի համայնքապետարանում անցկացնել աճուրդ՝ Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող որոշ հողերի համար:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

3. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել աճուրդի մասին հայտարարության հրապարակումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. հունիսի 29
Գլաձոր համայնք

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ղեկավարի
2021 թվականի հունիսի 29-ի թիվ 129 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի օգոստոսի 3-ին, ժամը 11:00-ին, Վայոց ձորի մարզի Գլաձորի համայնքապետարանում տեղի կունենա Գլաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ վաճառք:

Աճուրդով օտարվող հողերն են.

1) Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.51015 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք՝ կադաստրային ծածկագիր 10-042-0316-0131, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 800%-ը, 275 480 /երկու հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:
2) Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.87213 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հող՝ կադաստրային ծածկագիր 10-014-0128-0052, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 100%-ը, 10 678 710 /տաս միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր տաս/ ՀՀ դրամ:

Հողերի նկատմամբ սահմանափակումներ /սերվիտուտներ/ չկան: Աճուրդին մասնակցության հայտերի ընդունումը դադարեցվում է 2021 թվականի հուլիսի 29-ին, ժամը 18:00-ին:

Մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել մասնակցության վճարի անդորրագիր /վճարումը տեղում/:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Գլաձորի համայնքապետարան.

Հասցե՝ Գլաձոր համայնք, Գլաձոր բնակավայր փողոց 33, շենք 41, հեռ. /0281/ 2-34-46:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 130

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ, ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՎԱՀԱԿ ԱՐՄԵՆԱԿԻ ԳՈԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը և քաղաքացի Գինուշ Մարտունի Գևորգյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի նախկին բնակիչ, հանգուցյալ Վահակ Արմենակի Գոգորյանին /մահացած՝ 2008թ./ սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողը /կադաստրային ծածկագիր 10-015-0088-0024/ գրանցել Գլաձոր համայնք, Գլաձոր բնակավայր, փողոց 21, թիվ 21 հասցեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. հունիսի 30
Գլաձոր համայնք